

պատրաստված և նույն գույնի սափորներ են, որոնք ունեն փոքր-ինչ ձգված, լայն հատակներով իրաններ: Այս բնդհանուր գծերից բացի, դրանցից մեկն ունի բարձր վզիկ և ուսի վրա կեղծ, փոքր կանթ (ադ. III, նկ. 5): Ի տարբերություն սրա, մյուսն ունի անմիջապես շուրթից սկսվող և ուսին միացող աղեղնաձև կանթ (ադ. III, նկ. 4): Այս սափորից ամենեին չեն տարբերվում Ջուջևանում հայտնաբերվածները, որոնք ուղեկցվել են վաղ հայկական (մ. թ. ա. VI—IV դդ.) ժամանակաշրջանին պատկանող նյութերով²¹: Նմանօրինակ սափորներ են հայտնաբերվել նաև Այրիվանքում, Կարճաղբյուրում²² և Հայաստանի վաղ հայկական դարաշրջանին պատկանող այլ պեղավայրերում: Հետևաբար վերը նկարագրված նյութը պետք է թվագրել մ. թ. ա. VI—IV դդ.: Մ. թ. ա. I հազարամյակի II կեսով պետք է թվագրել և Արծվանիկում հայտնաբերված, ներկայումս Մոսկվայի Պատմության թանգարանում պահվող պաշտամունքային նշանակություն ունեցող բրոնզե արձանիկների կոմպլեքսը, որոնց ճշգրիտ դահլեռները հայտնի են Սարիգամիշից և Ուկրաինայից²³: Գծաթխաբար վերջիններիս հայտնաբերման հանգամանքները անհայտ են, որը և թույլ չի տալիս որոշակի եզրակացությունների հանդեպ մ. թ. ա. I հազարամյակի II կեսում նշված երկրների միջև գոյություն ունեցած կապերի մասին:

Առկա նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ բաշել նախնական բնույթի մի քանի ենթադրություններ: Այսպես, հետազոտվող շրջանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակույթն ուսումնասիրելու ժամանակ նշվեց սակրերի կառուցվածքային առանձնահատկությունը, որոնք նմանության գծեր ունենալով Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում

հայտնաբերվածների հետ, այնուամենայնիվ առանձին տարրերակի են պատկանում: Մյուս կողմից, ինչպես մատնանշում է Հ. Ա. Մարտիրոսյանը, Տուրքում հայտնաբերված նետասլաքներից Լեռնային Ղարաբաղում չեն հանդիպում և սակավ են մերձսևանյան դամբարաններում: Այս նյութերի կողքին, ինչպես տեսանք, կան և այնպիսիք (օր. սպիտակ շաղախով լցված բրոնզյա կոճակները, ցլադուխ գլխակալը և այլն), որոնք ամենեին չեն տարբերվում Լեռնային Ղարաբաղում հայտնաբերվածներից: Նշված առանձնահատկությունները և նմանության գծերը ենթադրել են տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում Ղափանի շրջանը, հանդիսանալով «Զանգեզուրյան» լոկալ մշակութային օջախի մի մասը, սերտ փոխհարաբերությունների մեջ է գրտնվել ողջ Անդրկովկասի, բայց հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հետ: Հետադաշում, մ. թ. ա. VIII—VII դդ. զգալի մերձեցում է նկատվում թալիշյան, իրանական և զանգեզուրյան մշակութային օջախների միջև: Այդ են վկայում, թերևս, կենդանակերպ խեցանոթները, որոնք մեծ նմանություն ունեն Քալիշում հայտնաբերվածների հետ: Սակայն Ղափանի շրջանում հայտնաբերված սափորների ձևերը և դարդանախշերը բնորոշ չեն Քալիշին և խիստ հազվադեպ են հանդիպում Հայաստանի մյուս շրջաններում: Չտարվելով այդ կապերի բնույթի վերաբերյալ հասկանալ ենթադրություններով, նշենք միայն, որ տվյալ ժամանակաշրջանում և նրան հաջորդող դարերում, որ հարուստ են եղել քաղաքական բուռն իրադարձություններով, Ղափանի շրջանում, ինչպես և ողջ Հայաստանում հանդես է գալիս վաղ հայկական մշակույթը:

Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հայկազյան հայագիտական հանդես, հատ. Գ, խմբագիր Երվանդ Հ. Քասունի, Բեյրութ, հրատարակություն Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնի, 1972, 326 էջ, նկարազարդ:

Հանդեսի սույն հատորը բացվում է Լ. Խաչիկյանի և Ա. Մաթևոսյանի «Դամասկոսի թան-

21 Ս. Ս. Չիլինգարյան, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 2, էջ 69—73, տախ. III, նկ. 1:

22 Նյութը հրատարակության է պատրաստում Հ. Մնացականյանը:

23 Ս. Ա. Խսայան, Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, ՀՍՍՀ ԳԱ «Լրա-

դարանի հայկական պատառիկներ» (էջ 9—54) հոդվածով, որտեղ մանրամասն ուսումնասիրված են օմայանների մզկիթի «Դանձատուն» կոչված գմբեթի տակ գտնվող հայերեն ձեռագրերի պատառիկների 34 թերթ-միավոր պարունակող հավաքածուն, որը փաստորեն բաղկացած է 13

րեր» (հաս. գիտ.), 1972, № 4, էջ 69—70: Георг Гоян, 2000 лет армянского театра, том I, М., 1952, էջ 303—304, նկ. 74—84:

մագաղաթյա ձեռագրերի մասունքներից և մեկ նամակի բեկորից (գրված թղթի վրա)։

Հոգվածում փորձ է կատարված որոշելու յուրաքանչյուր պատառիկի գրության մոտավոր ժամանակը (VIII—XIII դարեր) և եզրակացվում է, որ «Գանձատան» ձեռագրերի հավաքածուն ստեղծվել է XIII դարում։ Հոգվածում տրված է նաև պատառիկների նկարագրությունը՝ յուրաքանչյուր պատառիկի արժեքի ու նշանակության վերաբերյալ ժանոթագրություններով։

«Հայկական տեղաշարժեր Արևելյան Եվրոպայի քարտեսին վրա» հոգվածի (էջ 55—90) հեղինակն է Հ. Ճ. Սիրունին։ Նա հաստատում է այն կարծիքը, թե պատմական տարբեր ժամանակաշրջաններում, զանազան արշավանքների պատճառով հաճախակի է փոխվել Արևելյան Եվրոպայի հայ դադուիների վիճակը, մասնավորապես պատճառ դառնալով լեհահայերի և Մոլդովայի հայերի տեղափոխությունների և Բուլղարիայի ու Ռումինիայի հայ դադուիների կերպարանափոխման։ Այդ տեղաշարժերը շարունակվել են նաև համիդյան հալածանքների ու բալկանյան պատերազմների պատճառով։

Հանդեսի խմբագիր Երվանդ Հ. Քասունին ստորագրել է «Տարսոնի Իշխանը՝ Ապլղարիու Հասան Արծրունի (1071—1080 թթ.)» հոգվածը։

Հետաքրքրական են նաև Զավեն Մսրյանի «Թուրքիո ներքին գավառներու հայոց պարտադիր արտագաղթը (1929—1930 թթ.)», Արմեն Զարյանի «Եվրոպայում բազարանատիպ կառուցվածքների տարածման հարցի շուրջը», Մուրադ Հասրաթյանի «Հալիձորի բերդը», անվանի դրամագետ Զարեհ Պտուկյանի «Կիլիկիո Կոստանդին Գ — Լևոն բռնակալ — Կոստանդին Դ-ի կարևոր գրամագյուտ մը», Պարույր Աղալյանի «Նելիա Տեմիրճիպալյանի բառակերտական նպաստը հայ գրական լեզվին», Արտաշես Տեր-Նաչատրյանի «Սուրիահայ մամուլի պատմություն», Արամ Շորվողյանի «Ուրվագիծ Զեյթունի պատմության», Լևոն Վարդանի «Ժամանակագրություն հայկական տասնհինգի» հոգվածները։

Հատորն ունի նաև «Հայագիտական հրատարակություններ» բաժին, որտեղ գրախոսված են հայերեն և օտար լեզուներով սփյուռքում ու Սովետական Հայաստանում տպագրված հայագիտական մի շարք գործեր։

Documenti di Architettura Armena, 6. G(H)EGHARD. Testi: Alexandr Sahinian, Armen Manoukian, A. T. Aslanian. Documentazione fotografica: Adriano Alpago Novello, Armen Khatchatrian ed Armen Manoukian. Traduzioni: armeno-italiano Armen Zarian, italiano-inglese Anthony Masters ed italiano-armeno Sirarpie Papazian. Milano, Edizioni Ares, 1973, 73 p., ill.

«Հայկական ճարտարապետական հուշարձաններ» մատենաշարի այս վեցերորդ գիրքը՝ «Գեղարդ»-ը, շքեղ տպագրությամբ լույս է տեսել Միլանում՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի համագործակցությամբ և Հակոբ ու Արմեն Մանուկյանների խմբագրությամբ (խմբագրակից՝ Հերման Վահրամյան)։

Գիրքը լույս է ընծայվել իտալերեն, անգլերեն և հայերեն տեքստերով։ Ալեքսանդր Սահինյանը գրել է «Գեղարդի վանքի համակառուցը» պատմա-լուսարանական ուրվագիծը, իսկ Արմեն Մանուկյանը՝ «Գեղարդ և այլ մի նկատում» (էջ 10—13) հոգվածը։ Հերման Վահրամյանին

է պատկանում «Պատմական համառոտ ժամանակագրություն» ակնարկը, սկսած IV դարից մինչև մեր օրերը։ Ա. Ասլանյանը գրել է «Գեղարդի շրջանի երկրաբանական կառուցվածքը» համառոտ ուսումնասիրությունը։ Գրքում զետեղված են բազմաթիվ գունավոր և միագույն լուսանկարներ, չափագրություններ ու հատակագծումներ։

Հայկական ճարտարապետական հուշարձաններից մեկին՝ Գեղարդին նվիրված այս ուսումնասիրությունը կնպաստի հայ միջնադարյան ճարտարապետությունը օտար լեզուներով ընթերցողներին ծանոթացնելու և հայ մշակույթի տարածման գործին։

Հայերենից պարսկերեն բառարան, պարունակում է մոտ 24000 բառ, կազմեց Վարդան Հարությունյան, Թեհրան, 1972, 662 էջ։

Իր այս բառարանի վրա հեղինակը աշխատել է ավելի քան տասնհինգ տարի։ Հարությունյանը հայերեն բառերը վերցրել է Առձեռն բառարանից, լրացնելով Ս. Մալխասյանի բա-

ռահատոր «Բացատրական բառարանից»։ Բնականաբար հեղինակը օգտվել է նաև այլ աղբյուրներից, որոնց ցանկը (15 անուն) հիշատակվում է գրքում։

Նկատենք, որ Հարությունյանը միաժամանակ աշխատել է նաև երկու այլ բաբարանների վրա, երկուսն էլ պարսկերեն-հայերեն, մեկը՝ գրպանի բառարանի ծավալով, իսկ մյուսը՝ ընդարձակ, շուրջ 34—35 հազար բառեր պարունակող:

Բառարանն օգտագործողների աշխատանքը հեշտացնելու նպատակով հեղինակը ընթերցողների ուշադրություն է հրավիրում ինչպես պարսկական ալբուրենի հետ կապված դժվարություն-

ների, այնպես էլ պարսկերեն բառերը հայերեն տառերով տառադարձելու հետ կապված առանձնահատկությունների վրա:

Գրքի ներածականում հեղինակը գրում է. «Աշխատել եմ յուրաքանչյուր հայերեն բառի մոտ դնել պարսկերեն մի կամ մի բանի համապատասխան բառեր, եթե այս կերպ հնարավոր չի եղել, ապա հայերեն բառը հակիրճ ձևով բացատրել եմ պարսկերենով»:

ՄԻՆԱՍՅԱՆ Լ.Գ., Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636—1972), Նոր Զուղա, տպարան «Ս. Ամենափրկիչ» վանքի, 1972, 176 էջ, նկարազարդ:

Բազմադարյան հայ մշակույթի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի տպագրությունը՝ աշխարհի շատ երկրներում ստեղծված տպարաններով, որոնք մեր ժողովրդի բազաբակրթության դարգացման հիմնական լծակներից մեկն են հանդիսացել: Հայ տպագրության պատմության մեջ Վենետիկից, Կ. Պոլսից, Հոռմից, Լվովից, Միլանից, Փարիզից հետո աչքի է ընկնում նաև Նոր Զուղան, որը դեռևս XVII դ. սկզբից հայտնի է դարձել իր տպագրած «Սաղմոս Դավթի» (1638 թ.), «Հարանց վարք» (1641 թ.), «Ժամագիրք Ատենի» (1642 թ.), «Գիրք Տումբաաց որ և պարզատումար կոչի» (1647 թ.) և այլ հրատարակություններով:

Նոր-Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանի պատմությունը և տպագրած գրքերի ցանկը այս գրքում ավելի լիակատար ու ծավալուն են, քան այդ մասին անցյալում լույս տեսած զանազան հոդվածներն ու երկերը:

Տպագրության գլուխի ու հայերեն առաջին տպագրությունների մասին համառոտ ակնարկից հետո հեղինակը առանձին գլուխներով ներ-

կայացնում է նախատուր վարդապետ Կեսարացու ջանքերով հիմնադրված տպարանի, նրա տպագրած գրքերի, Հովհաննես վարդապետ Քթրչենցի տպագրական աշխատանքների (որը առանձնապես զարգացրել է Զուղայի տպարանը) և ընդհանրապես տպագրիչների կյանքի ու տպարանի զարգացման պատմությունը:

Գրքի առավել արժեքավոր և ծավալուն մասն է կազմում 335 տարիների ընթացքում (1638—1972 թթ.) Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանի լույս ընծայած 372 գրքերի, օրացույցների, տեղեկագրերի, կանոնադրությունների, պարբերականների ու այլ հրատարակությունների մատենագիտական ցանկը, որը տրված է ժամանակագրական կարգով:

Դրբում հետաքրքրական տեղեկություններ կան նաև Նոր Զուղայում գործած հայկական այլ տպագրական օջախների՝ «Լաղարիստ» և «Ստեփանյան» տպարանների և նրանց գործունեության մասին:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

BURCHARD BRENTJES, *Drei Jahrtausende armenien*, Koehler-Amelang, Leipzig, 1973.

Վերջերս լույս է տեսել գերմանացի անվանի արևելագետ, Դերմտենական Դեմոկրատական Հանրապետության Մարտին Լյուբերի անվան համալսարանի պրոֆեսոր Բուրհարդ Բրենտյեսի Հայաստանին նվիրված աշխատությունը՝ «Հայաստանի երեք հազար տարին» խորագրով: Հեղինակը Արևելքին ու Հայաստանին բաջածանոթ անձնավորություն է, Ասիայի և Աֆրիկայի պատմությանն ու մշակույթին նվիրված բազմաթիվ մենագրություններ է լույս ընծայել, որոնք գիտական շրջանակներում արժանացել են բարձր գնահատության:

Ներկա աշխատությունը բաղկացած է 5 մասից. 1. Հայ ժողովրդի մահվան երթը, 2. Հայաստանը և նրա ուսումնասիրումը, 3. Լեռնային երկիրը՝ մինչև նրա բնակեցումը հայերով, 4. Թագավորները Արարատի վրա, 5. Մեծ Հայքը ժողովրդի տակ, 6. «Ոսկե դար», 7. «Արծաթե դար». Փոքր Հայքի թագավորություն, 8. Օտար լծի տակ, 9. Ազգային վերածնունդ՝ Հայկական Սովետական Հանրապետություն:

Հեղինակը նախապես համառոտակի խոսում է XX դարի սկզբին հայ ժողովրդի ապրած ծանր ողբերգության ու դրան առնչվող բազմաթիվ

իրադարձությունների մասին, հիմնականում օգտագործելով Լեպսիուսի և Նանսենի աշխատությունների նյութերը:

Նպատակ ունենալով գերմանացի ոչ մասնագետ ընթերցողին Հայաստանի վերաբերյալ տալ հնարավորին չափ լայն ու ճշգրիտ պատկերացում, հեղինակը 11 մասից սկսում է բուն նյութը, հարեանցի ներկայացնելով Հայաստանի աշխարհագրության, պատմության, հնագիտության, մշակույթի և արվեստի ուսումնասիրման վիճակն առ այսօր հայագիտության մեջ ընդհանրապես: Այնուհետև ժամանակագրական հաջորդականությամբ քիչ ավելի մանրամասն անդրադառնում է հայ ժողովրդի բաղադրական պատմության հարցերին՝ սկսած հնագույն և ավանդական ժամանակներից մինչև մեր օրերը: Այս առիթով նա կատարում է որոշ պարբերացում՝ ըստ գլխավոր դարաշրջանների ու իրադարձությունների: Կենսատելի է, որ նա չի մոռանում միաժամանակ կանգ առնել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավիճակի, այլ ժողովուրդների հետ նրա ունեցած առևտրատնտեսական, հասարակական և մշակութային հարաբերությունների վրա: Օգտակար խոսք է ասում նաև հայ ժողովրդի հարկադիր արտագաղթի պատճառների, գաղթօջախների ստեղծման ու գործունեության, հայ-ռուսական դարավոր հարաբերությունների, «Հայկական հարցի»,

Սարգարապատի ճակատամարտի վերաբերյալ:

Դրրի վերջին բաժնում Բրենտյեսը պատմում է սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ապրած բաղադրական, տնտեսական, սոցիալական և մշակութային վերելքի մասին, օգտագործելով պատմագրական բազմաթիվ աղբյուրներ:

Ի. Բրենտյեսը, որպես հնագետ և արվեստի տեսաբան, մեծ տեղ է տալիս Հայաստանի հնագույն նյութական և հոգևոր մշակույթին: Փաստական ու ցուցադրական առատ նյութի հիման վրա նա այս կապակցությամբ մի շարք ուշադրավ ընդհանրացումներ է անում, որոնք աշխատությունը օժտում են նաև պատմա-դեղագիտական արժանիքներով: Դրական պիտի համարել այս առթիվ հեղինակի կատարած զուգահեռ համեմատությունները հայ և այլ ժողովուրդների արվեստների միջև, նշելով դրանց փոխադարձ ազդեցությունները:

Աշխատությունը աչքի է ընկնում իր շատ լայն ընդգրկմամբ, փաստական հարուստ նյութով, պատմական հուշարձանների և արվեստի գործերի սև ու դունավոր բազմաթիվ նկարներով: Այն միանգամայն օբյեկտիվ, ճշգրիտ ու լայն պատկերացում է տալիս Հայաստանի պատմության և մշակույթի մասին:

Մ. ՅԱՎՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Կայսերական ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը հիմնադրվել է 1851 թ. մարտի 10-ին Թիֆլիսում, մայր ընկերության կազմակերպումից ընդամենը 6 տարի հետո: Դա աշխարհում հինգերորդն էր՝ Փարիզի, Բեռլինի, Լոնդոնի, Պետերբուրգի (ռուսական) աշխարհագրական ընկերություններից հետո: Ամերիկայի Միացյալ Նահանգներում աշխարհագրական ընկերությունը կազմակերպվել է 1852 թ.:

Կովկասյան բաժանմունքը նպատակ էր հետապնդում ուսումնասիրել Կովկասը «բուն աշխարհագրական, ազգագրական և վիճակագրական (իմա՝ տնտեսական) առումներով»²: Այդ

նպատակն իրագործելու համար ընկերության կանոնադրության 3-րդ կետով սահմանվում է, որ Կովկասյան բաժանմունքը՝

«1. փնտրում է հայտ է բերում Կովկասյան երկրամասի վերաբերյալ արդեն հավաքված տեղեկությունները, օրոնք պահվում են տեղական արխիվներում և մասնավոր անձանց մոտ, բնաբերում է դրանք, գնահատում և պարզում, թե ինչպես կարելի է օգտագործել գիտության համար»:

2. կատարում է գիտական ուսումնասիրություններ տեղերում, նոր տեղեկություններ ձեռք բերելու կամ արդեն եղած տեղեկությունները ստուգելու և լրացնելու համար:

3. օժանդակություն է ցույց տալիս գիտական նպատակներով երկրամաս այցելող ճանապարհորդներին, ինչպես ռուս, նույնպես և օտարերկրացի:

4. հիմնում է իր գրադմուրների շրջանակներին վերաբերող նյութերի և գիտական ձեռնարկների պահոց, ինչպես՝ երկրամասի վերա-

¹ Այսուհետև՝ Պարբերականներ:

² Ст. 6 «Положение о Кавказском Отделе Императорского Русского Географического общества, высочайше утверждённое 27-го июня 1850 года», «Записки Кавк. Отд. Русск. геогр. общ.», кн. I, 1852, էջ 1: